ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 134-Ա

ԱՆԱՀԻՏ ԱՔՈՒԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ 06-019-0064-0021 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արջուտ համայնքի բնակչուհի Անահիտ Աքուլյանին 28,08,1991 թվականի տեղական սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 02 որոշմամբ սեփականության իրավունքով հատկացվել է 06-019-0064-0021 ծածգարից 0,12 հա տնամերձ հողամաս, սակայն ՀՀ կառավարության 29,12,2005թ թիվ 2393 որոշմամբ նշված հողամասը փոխանցվել է որպես համայնքային սեփականության բնակավայրի այլ հողամաս, ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 4-րդ գլխի 30-րդ կետի 7-րդ ենթակետով և 42-րդ կետով, քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալների ուղղման նպատակով՝

Որոշում եմ՝

1.Վերականգնել Արջուտ համայնքի բնակչուհի Անահիտ Աքուլյանին 28,08,1991թ թիվ 02 սեփականաշնորհման հանձնաժողովի արձանագրության որոշմամբ հատկացված 06-019-0064-0021 ծածկագրի 0,12 հա տնամերձ հողամասի հիմքերը:

2.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գրասենյակ՝ կատարելու քարտեզագրման սխալի ուղղում և գրանցելու Անահիտ Աքուլյանի սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» դեկտեմբերի 2021 թվականի N 135-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով և հաշվի առնելով, որ Լոռու մարզի Փամբակ միավորված համայնքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացվել են համայնքի ավագանու ընտրություններ և ընտրությունների արդյունքները պաշտոնական հրապարակվել են 12.12.2021թ.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Արջուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Վարդան Մկրտչյանի լիազորությունները համարել դադարած և նրան ազատել համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնից:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Սոնյա Նիկողոսյանին՝ հաշվարկել և Վարդան Մկրտչյանին վճարել վերջնահաշվարկ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Վ.Շ.Մկրտչյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ * ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՎԱՌ * 07300557 * ԳՈՒՄՐԻ-ՀԱՄԱՅՆՔ